



ՉՈՐ ԱԲԵՐԵՔ ՏԱՐԱՃՔԸ ԺԱՄԱՆԱԿ ՇԱՐԵԼ ՈՒ ՅԱՄԱՐ. ՉՄԻՋԱՄՏԵԼ ՈՒ ՌԱԶՄԱՎԱՐՈՒ ԹՅՈՒՆ

(Տասնմեկերորդ ուզմամբարություն)

Հզոր թշնամու դեմ նահանջը ոչ թե թուլության, այլ ուժի նշան է: Դիմադրելով հակահարված տալու գայթակղությանը՝ դուք կշահեք թանկարժեք ժամանակ: Ժամանակ, որը ձեզ անհրաժեշտ է վերականգնվելու, մտածելու և իրավիճակին այլ տեսանկյունից մոտենալու համար: Զիջեք: Ժամանակն այժմ ձեզ համար ավելի կարևոր է, քան տարածքը: Հրաժարվելով ճակատամարտից՝ դուք կկատաղեցնեք ձեր թշնամիներին, և հավասարակշռությունը կորցնելով՝ նրանք կսկսեն սխալներ թույլ տալ: Ժամանակը կբացահայտի և՛ նրանց անզգուշությունը, և՛ ձեր իմաստությունը: Երբեմն դուք կարող եք շատ բանի հասնել՝ ոչինչ չանելով:

ՆԱՀԱՆՁԵՔ ՈՐՊԵՍՁԻ ԱՌԱՋ ՇԱՐԺՎԵՔ

1930-ականների սկզբին Չինաստանի կոմունիստական կուսակցության շարքերում հայտնվեց մի ծագող աստղ՝ մեծ խոստումնալից երիտասարդ՝ Մաո Ցզեդուն (1893–1976) անունով: Երկիրը ներքաշվեց քաղաքացիական պատերազմի մեջ կոմունիստների և ազգայնականների միջև: Մաոն գլխավորեց պայքարը ազգայնականների դեմ և, չնայած նրանց զգալի թվային գերազանցությանը, նրանց հարված հասցրեց պարտիզանական պատերազմի միջոցով: Մաոն նշանակվեց Չինաստանի նորաստեղծ կոմունիստական կառավարության նախագահ, և նրա վառ, սադրիչ աշխատությունները ռազմավարության և փիլիսոփայության վերաբերյալ լայն ժողովրդականություն վայելեցին:

Ավելի ուշ պայքարը բռնկվեց արդեն կոմկուսի ներսում: Իշխանության փորձեցին գալ Խորհրդային կրթություն ստացած մի խումբ մտավորականներ, որոնք հայտնի էին որպես «28 բոլշևիկներ»: Նրանք ամբարտավանորեն վերաբերվեցին Մաոյին՝ արհամարհանքով խոսելով պարտիզանական պատերազմին նրա նվիրվածության մասին, որպես հետամնաց գյուղացիներին բնորոշ վախկոտության և թուլության վկայություն: Նրանք իրենք կոչ էին անում ազգայնականների հետ իրական, բաց պատերազմի մեջ մտնել և իշխանությունը գրավել առանցքային դիրքերում՝ քաղաքներում և շրջաններում, ինչպես ժամանակին դա արեցին Ռուսաստանի բոլշևիկները: Աստիճանաբար «28 բոլշևիկների» խումբը մեկուսացրեց Մաոյին՝ գրկելով ինչպես քաղաքական, այնպես էլ ռազմական իշխանությունից: 1934 թվականին նա փաստացի տնային կալանքի մեջ էր Խունանի ֆերմայում:

Մաոյի ընկերներն ու համախոհները տեսնում էին, թե ինչպես էր նա տառապում գլխապտույտ բարձունքների անկումից: Սակայն անկումից ավելի սարսափելի էր այն փաստը, որ նա, կարծես, հաշտվել էր իր նոր իրավիճակի հետ: Նա իր կողմնակիցներին այլևս պայքարի կոչ չէր անում, դադարեցրել էր իր աշխատանքների հրատարակումն ու հեռացել էր ամեն բանից: Թվում էր, թե «28 բոլշևիկների» խմբի անդամները ճիշտ էին: Մաոն ապացուցում էր, որ վախկոտ է:

Նույն թվականին ազգայնականները Չան Կայշիի գլխավորությամբ սկսեցին նոր արշավ՝ նպատակ ունենալով վերջ տալ կոմունիստներին: Պլանը բաղկացած էր շրջապատել այն կետերը, որտեղ տեղակայված էին Կարմիր բանակի ստորաբաժանումները և ոչնչացնել այն մինչև վերջին զինվորը: Տպավորությունն այնպիսին էր, որ այս անգամ նրանք ավելի մոտ են հաղթանակին, քան երբևէ : «28 բոլշևիկների» խմբի կողմնակիցները քաջաբար կռվում էին՝ փորձելով մնալ իրենց զբաղեցրած շրջաններում, բայց շատ ավելի շատ ազգայնականներ կային, բացի այդ, նրանք ունեին փորձառու ռազմական խորհրդականներ Գերմանիայից :

Չանկայշիականները գրավեցին քաղաք առ քաղաք՝ դանդաղորեն հետ մղելով կոմունիստներին: Հազարավոր մարդիկ լքեցին Կարմիր բանակը, և այնուամենայնիվ, մնացածները ոչ ավելի, քան 100,000 մարդ, կարողացան դուրս գալ շրջապատումից և շարժվել դեպի հյուսիս-արևմուտք: Մաոն միացավ նրանց: Միայն հիմա նա խոսեց՝ մեկնաբանելով «Քսանութի» ռազմավարությունը: Նրանք նահանջում էին ուղիղ գծով, բողոքեց Մաոն՝ հեշտացնելով չանկայշիականների հետապնդումը: Ավելին, նրանք շատ դանդաղ էին շարժվում՝ տանելով լքված շտաբներից թղթերի փաստաթղթերի, քարտադարանների և այլ բալաստ հանդիսացող կապոցները: Նրանք վարվում էին այնպես, կարծես ամբողջ բանակը շարժական ճամբար է, և լրջորեն պլանավորում էին կռվել չանկայշիականների դեմ հին ձևերով ու մեթոդներով: Մաոն համոզված էր,

որ նոր արշավանքը պետք է լինի շատ ավելին, քան ժամանակավոր նահանջ դեպի անվտանգ դիրքեր: Կուսակցության ամբողջ հայեցակարգը պահանջում էր վերանայում: Ռուս բոլշևիկների փորձը կուրորեն պատճենելու փոխարեն, նրանք պետք է իրականացնեին իրենց սեփական յուրօրինակ չինական հեղափոխությունը՝ ոչ թե պրոլետարիատի, այլ գյուղացիության հեղափոխություն, քանի որ գյուղացիությունը կազմում էր երկրի բնակչության ամենամեծ, իրականում միակ զանգվածը: Դրան հասնելու համար ժամանակ էր պետք, և կարևոր էր նաև առայժմ չմասնակցել ռազմական գործողություններին: Նրանք պետք է շարժվեին դեպի հարավ-արևմուտք՝ ապաստան գտնելով Չինաստանի ամենահեռավոր շրջաններում, որտեղ թշնամին չէր կարող հասնել նրանց:

Կարմիր բանակի սպաները սկսեցին լսել Մաոյին: Նրա պարտիզանական մարտավարությունը մինչ այժմ ապացուցել էր իր արդյունավետությունը՝ տալով լավ արդյունքներ, մինչդեռ «Քսանութի» ռազմավարությունը ակնհայտորեն ձախողվում էր: Կամաց-կամաց Մաոյի գաղափարները սկսեցին ընդունվել: Բանակն այժմ թեթև էր շարժվում: Նրանք երթով շարժվում էին միայն գիշերը, ինչը թույլ էր տալիս նրանց թաքնվել չանկայշիականների հետապնդումից: Որտեղով որ նրանք անցնում էին, ակտիվորեն քարոզում էին մաոյական գաղափարները և կամավորականներ հավաքագրում տեղի գյուղացիներից: Ինչ-որ կերպ Մաոն բնականաբար դարձավ բանակի առաջնորդ: Չնայած բանակը հարյուր անգամ փոքր էր հակառակորդից, այդուհանդերձ, նրա հրամանատարության ներքո այն կարողացավ խուսափել հետապնդումից և 1935 թվականի հոկտեմբերին հասնել Շանսիի հեռավոր նահանգ: Նրանք ստիպված էին անցնել 24 գետ և 18 լեռնանցք, անընդհատ վտանգելով իրենց կյանքերը, բայց վերջապես հասան իրենց նպատակին՝ բանակն ավարտեց իր «Երկար երթը»: Իրականում, բանակից գրեթե ոչինչ չմնաց: Միայն վեց հազար մարդ հասավ մինչև վերջ, բայց ստեղծվեց նոր տեսակի կուսակցություն, այնպիսին, որի մասին Մաոն խոսել էր սկզբից: Դրա միջուկը համախոհների խումբ էր, որը նվիրված էր գյուղացիական հեղափոխության գործին և կիսում էր պարտիզանական պատերազմի մասին գաղափարները:

Շենսիում, որտեղ նրանց վտանգ չէր սպառնում, հնարավորություն ստեղծվեց սկզբում վերականգնվել արշավի դժվարություններից, իսկ հետո սկսել քարոզչական գործունեություն երկրի բնակչության շրջանում: 1949 թվականին կոմունիստները վերջնական հաղթանակ տարան ազգայնականների նկատմամբ և նրանց վտարեցին մայրցամաքից:

Մեկնաբանում

Մաոն ծնվել և մեծացել էր գյուղացիական ընտանիքում, իսկ չինական գյուղում կյանքը հեշտ չի եղել: Գյուղացին ստիպված էր համբերատար լինել, համակերպվել եղանակի քմահաճույքներին, որից կախված էր բերքը: Հազարամյակներ շարունակ այս խոնարհությունից և համբերությունից ծնվեց դաոյի ուսմունքը:

Դաոյի հիմնարար գաղափարը Յու-Ուի հայեցակարգն էր՝ գործողություն անգործության միջոցով, իրավիճակի տիրապետում՝ այն տիրապետելու փորձերի բացակայության միջոցով և իշխանության ձեռքբերում՝ հրաժարման միջոցով: Յու-Ուն ենթադրում է այն համոզմունքը, որ տարբեր հանգամանքների վրա ակտիվորեն ազդելով՝ սեփական կյանքը ազդելու և փոխելու նպատակով, մարդը հասնում է հակառակին: Նա ավելի ու ավելի է նահանջում, ճանապարհին ստեղծելով ավելի ու ավելի շատ խնդիրներ: Երբեմն ավելի լավ է պառկել, ոչինչ չանել և պարզապես

սպասել, մինչև ձմեռն ավարտվի: Նման պահերը կարող են օգտագործվել ինքն իրեն հավաքելու, մտքերը հավաքելու և անհատականությունն ամրապնդելու համար:

Գյուղացի երիտասարդ Մառն ներծծված էր այս գաղափարներով, որոնք նա կիրառում էր ինչպես քաղաքականության, այնպես էլ պատերազմի մեջ: Վտանգի պահերին, երբ թշնամին ավելի ուժեղ էր, նա չէր վախենում նահանջից, հասկանալով, որ շատերի կողմից դա ընկալվելու է որպես իր կողմից թուլության դրսևորում: Ժամանակը կօգնի բացահայտել թերությունները և անկատարությունը թշնամիների ռազմավարական ծրագրերում, և այդ ժամանակ նա առանց հապաղելու հարված կհասցնի և կհասնի վճռական առավելության:

Նա դեպի Խունան հարկադիր նահանջի ժամանակահատվածը մեկնաբանեց ոչ թե որպես նվաստացուցիչ պարտություն, այլ որպես դրական արդյունքին ուղղված ռազմավարություն: Նմանապես, Մառն օգտագործեց «Երկար երթը»՝ վերանայելու Կոմունիստական կուսակցության կազմն ու նպատակները և ստեղծելու իր շարժման նոր տեսակի կողմնակիցներ: Երբ նրա ձմեռն անցավ, նա կրկին դուրս եկավ ստվերից: Այդ ժամանակ նրա թշնամիները գոհ էին դարձել իրենց սեփական թուլություններին, մինչդեռ նա արքորի ժամանակն օգտագործեց ամրապնդվելու և ուժերը կուտակելու համար:

Պատերազմը խաբուսիկ է: Ձեզ կարող է թվալ, որ լի էք ուժով և զգալի առավելություն ունեք թշնամու նկատմամբ, բայց ժամանակը հաճախ ցույց է տալիս, որ իրականում դուք եղել եք ամենավտանգավոր մոլորության մեջ: Դուք երբեք չեք կարող հաստատ իմանալ իրավիճակը, քանզի ներկայի մեջ լիարժեք ընկղմվելը մեզ զրկում է իրական հեռանկարը տեսնելու հնարավորությունից: Լավագույն բանը, որ կարելի է անել, փորձել ազատվել մտքի ծուլությունից, մտածողության կարծրատիպերից:

Հարձակվելը, առաջ շարժվելը միշտ չէ, որ օգտակար է: Նահանջը միշտ չէ, որ թուլության նշան է: Իրականում, վտանգի կամ դժվարության պահերին լավագույն ռազմավարությունը հաճախ պարզապես պայքարից հրաժարվելն է: Հակառակորդից անջատվելով՝ դուք չեք կորցնում իսկապես արժեքավոր ոչինչ, բայց ձեռք եք բերում այն ժամանակը, որը ձեզ անհրաժեշտ է վերագնահատելու, վերանայելու ձեր գաղափարները և առանձնացնելու ձեր իսկապես հավատարիմ դաշնակիցներին նրանցից, ովքեր մնում են միայն այնքան ժամանակ, քանի դեռ հաջողությունը ձերն է: Ժամանակը աշխատում է ձեր օգտին. այն դառնում է ձեր դաշնակիցը: Նույնիսկ եթե արտաքուստ թվում է, թե դուք ոչինչ չեք անում, դուք այնուամենայնիվ ձեռք եք բերում ներքին ուժ, որը հետագայում, երբ գործելու ժամանակը գա, կվերածվի անհավանական ուժի:

ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՆԱԼԻՆԵՐԸ

Խնդիրը, որի հետ մենք բոլորս վաղ թե ուշ բախվում ենք՝ թե՛ ռազմավարության մեջ, թե՛ իրական կյանքում, այն է, որ մեզանից յուրաքանչյուրը եզակի է և ունի յուրահատուկ անհատականություն: Մեր հանգամանքները նույնպես եզակի են. չկան երկու բացարձակապես նույնական իրավիճակներ: Բայց ամենից հաճախ մենք չենք կարողանում սահմանել, թե ինչն է մեզ դարձնում յուրահատուկ, տարբեր մյուսներից, այլ կերպ ասած՝ ովքեր ենք մենք իրականում: Մեր մտքերն ու գաղափարները փոխառված են գրքերից, ուսուցիչներից. մենք ենթարկվում ենք ամեն տեսակի

ազդեցությունների, չնայած միշտ չէ, որ գիտակցում ենք դա: Մենք իրադարձություններին արձագանքում ենք ստանդարտ և կարծրատիպային ձևերով՝ ստեղծագործ լինելու և յուրաքանչյուրի եզակիությունը տեսնելու փոխարեն: Մեր շրջապատի մարդկանց հետ մեր հարաբերություններում մենք նաև հեշտությամբ ենթարկվում ենք նրանց խառնվածքի, բնավորության և տրամադրության ազդեցությանը: Այս ամենը ստեղծում է որոշակի երկիմաստություն: Մենք չենք կարողանում տեսնել իրադարձությունները այնպիսին, ինչպիսին դրանք իրականում կան: Մենք նույնիսկ լիովին չենք ճանաչում ինքներս մեզ:

Որպես ստրատեգ՝ ձեր խնդիրը հեշտ է: Պարզել, թե ինչն է ձեզ տարբերում մյուսներից, հասկանալ ինքներդ ձեզ, ավելի լավ հասկանալ ձեր և ձեր հակառակորդի դիրքերը, սովորել դիտարկել և վերլուծել իրադարձությունները տարբեր անկյուններից և ձգտել տեսնել իրերը այնպիսին, ինչպիսին դրանք իրականում կան: Առօրյա կյանքի եռուզեռում այս խնդիրը հեշտ գործ չէ: Այս ամենի ուժը կարող է միայն ճշգրիտ պատկերացում տալ այն դեպքում, երբ դուք սկսեք նահանջել: Դուք միշտ առաջ եք շարժվում, անընդհատ հարձակվում, բայց ձեր ռազմավարությունները կլինեն թույլ և ձևական, եթե դրանք հիմնեք բացառապես հին օրինակների, անցյալում արդեն պատահածի կամ ուրիշի հետ կատարվածի վրա: Դուք կլինեք կապիկի նման, որը կրկնօրինակում է ուրիշների ժեստերը՝ ստեղծագործելու փոխարեն: Ժամանակ առ ժամանակ դուք պետք է նահանջեք ստվերների մեջ, մենության մեջ, եթե ուզում եք գտնել ինքներդ ձեզ, առանձնանալ վարակիչ արտաքին ազդեցություններից: Եվ դա անելու լավագույն ժամանակը դժվար և վտանգավոր ժամանակներն են:

Խորհրդանշականորեն նահանջը որոշակի կրոնական կամ դիցաբանական նշանակություն ունի: Անապատ փախչելը թույլ տվեց Մովսեսին և հրեա ժողովրդին վերագտնել և ամրապնդվել, նպաստել նրա սոցիալական և քաղաքական վերածնունդին: Հիսուսը քառասուն օր անցկացրեց անապատում մենության մեջ, իսկ մահմեդական Մարգարե Մուհամմադը մեծ վտանգի ժամանակ փախավ Մեքքայից: Նա և իր ամենահավատարիմ համախոհներից մի քանիսը մենության այս ժամանակահատվածն օգտագործեցին իրենց կապող հանգույցները ամրապնդելու, իրենց հասկանալու, իրենց ճանապարհը իմաստավորելու համար: Ժամանակի ընթացքում հավատացյալների այս փոքր խումբն այնքան հզորացավ, որ կարողացավ գրավել Մեքքան և Արաբական թերակղզին, իսկ ավելի ուշ՝ Մուհամմադի մահից հետո, հաղթանակ տարավ բյուզանդական և պարսկական կայսրության նկատմամբ՝ տարածելով Իսլամը նրանց տարածքում:

Ամբողջ աշխարհում, յուրաքանչյուր ժողովրդի դիցաբանության մեջ կան հերոսներ, որոնք ստիպված են եղել նահանջել, երբեմն շատ հեռու, նույնիսկ՝ ինչպես Ռդիսեսի դեպքում՝ Հադեսի ստորգետնյա աշխարհ, որպեսզի գտնեն իրենց:

Ո՞վ գիտի, եթե Մովսեսը մնար Եգիպտոսում՝ այնտեղ ազատագրական պայքար մղելու, գուցե հրեա ժողովուրդը պատմության մեջ միայն մի կարճ հիշատակում ստանար: Եթե Մուհամմադը իր ընկերների հետ շտապեր Մեքքա, նրանք կպարտվեին և կմոռացվեին: Երբ դուք մերձամարտի մեջ եք մտնում ինչ-որ մեկի հետ, ով ձեզանից ուժեղ է, դուք կորցնում եք ավելին, քան ունեցվածքը կամ դիրքը, դուք կորցնում եք հստակ մտածելու, խույս տալու, ինքնուրույն մնալու ունակությունը: Դուք ընկնում եք ագրեսորի հույզերի ազդեցության տակ, ձեզ վրա ճնշում են գործադրում այնպիսի եղանակներով, որոնք դուք չեք կարող պատկերացնել: Ավելի լավ է սահուն ու արագ շարժումներով հեռանալ և օգտագործել այս եղանակով շահած ժամանակը՝ ինքներդ ձեր մեջ խորասուզվելու համար: Թող թշնամին զբաղեցնի

տարածքը և առաջ շարժվի: Դուք դեռ կխաղարկեք և կվերադարձնեք ձերը, երբ ժամանակը գա: Նահանջելու որոշումը խոսում է ոչ թե թուլության, այլ ուժի մասին: Սա ռազմավարական իմաստության գագաթնակետն է :

Նահանջի էությունն այն է, որ դուք հրաժարվում եք թշնամու հետ որևէ տեսակի փոխադրեցությունից՝ թե՛ հոգեբանորեն, թե՛ ֆիզիկապես: Դուք կարող եք սա ձևակերպել տարբեր ձևերով՝ դա կարող է լինել պաշտպանություն, ինքնապաշտպանություն, որը նույնպես կարող է լինել արդարացված լինել, կամ վճռական ռազմավարություն: Ագրեսիվ հակառակորդի հետ բախվելուց հրաժարվելը կարող է նրան գայրացնել և հավասարակշռությունը հանել:

Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ Անգլիան և Գերմանիան բախվել են նաև Արևելյան Աֆրիկայում, որտեղ երկու երկրներն էլ գաղութներ ունեին: 1915 թվականին բրիտանացի հրամանատար, գեներալ-լեյտենանտ Յան Սմեթսին դիմակայում էր շատ ավելի փոքր գերմանական բանակի ուժերը, որի հրամանատարն էր գնդապետ Պաուլ Ֆոն Լետտոու-Ֆորբեկը: Դեպքերը զարգանում էին Արևելյան Աֆրիկայի գերմանական մասում: Սմեթսը հույսը դրել էր արագ հաղթանակի վրա: Նա ակնկալում էր, որ իր բանակը, գերմանացիներին պարտության մատնելուց հետո, կտեղափոխվի մեկ այլ, ավելի կարևոր ճակատ: Սակայն Ֆոն Լետտոու-Ֆորբեկը խուսափեց ճակատամարտից և նահանջեց հարավ:

Սմեթսը շտապեց նրա հետևից: Գեներալը բազմիցս կարծում էր, որ նա անկյուն է գցել գերմանացիներին, բայց ամեն անգամ պարզվում էր, որ գերմանացին կրկին աննկատ դուրս էր պրծնում որոգայթներից՝ ընդամենը մի քանի ժամով առաջ ընկնելով Սմեթսից: Գեներալը հետևում էր Ֆորբեկին, կարծես մագնիսը երկաթին: Նրանց ճանապարհներն անցնում էին գետերով, լեռներով և անտառներով: Հաղորդակցության գծերը ձգվում էին հարյուրավոր մղոններ, զինվորները տառապում էին գերմանացիների փոքր, հանդուգն հարձակումներից, որոնք լուրջ վնաս էին հասցնում մարտական ոգուն: Բրիտանացիները խրված էին անանցանելի արևադարձային անտառում, իսկ ժամանակն անցնում էր: Զինվորները տառապում էին հիվանդություններից, սովից, բանակը մահանում էր, բայց բանը այդպես էլ չէր հասնում իրական բախմանը: Արդյունքում Ֆոն Լետտոու-Ֆորբեկին հաջողվեց անգլիացիներին այդպիսի վիճակում պահել երկար ու ձիգ չորս տարի՝ կապելով մարտունակ բրիտանական բանակի ձեռքերն ու ոտքերը:

Սմեթսի՝ ուժեղ, ագրեսիվ մարդու համար սովորական պրակտիկա էր բաց մարտում ջախջախել հակառակորդին: Սակայն Ֆոն Լետտոու-Ֆորբեկը խաղաց իր սեփական խաղը: Նա ուղղակիորեն չգնաց Սմեթսի հետ բախման, այլ մնաց գայթակղիչ հեռավորության վրա, գրեթե մի փոքր անհասանելի: Եվ այդ գայթակղությունը բրտանացիներին տարավ մահացու ջունգլիներ: Սակայն կատաղած, գրգռված Սմեթսը համառորեն շարունակում էր հետապնդումը: Իսկ Ֆոն Լետտոու-Ֆորբեկը՝ բրիտանացիներին ոչնչացնելու համար օգտագործում էր այն, ինչ լավ գիտեր՝ Աֆրիկայի անսահման տարածությունները և նրա անհյուրընկալ կլիման :

Մարդկանց մեծ մասը արձագանքում է ագրեսիվ գործողություններին՝ այս կամ այն կերպ ներգրավվելով դրանց մեջ թույլ տալով, որ իրենց քաշեն-տանեն: Դիմադրելը գրեթե անհնար է: Չտրվելով սադրանքներին, զսպելով ձեր բնական ազդակները և նահանջելով՝ դուք ցուցաբերում եք ուշադրավ ուժ և հանգստություն: Ձեր թշնամիները չեն սպասի ձեր արձագանքին: Նահանջը գայրացնում է նրանց և հրահրում կրկին հարձակվել: Հետևաբար, շարունակեք մնալ ստվերում, նահանջեք՝ ժամանակ շահելով: Հանգիստ եղեք, մի կորցրեք ձեր մտքի ներկայությունը: Գրավեք

նրանց անգործության դատարկության մեջ, ինչպես դա արեցին գերմանացիները Աֆրիկայում: Նրանք կսկսեն այրել իրենց և սխալներ թույլ տալ: Ժամանակն աշխատում է ձեռք համար, քանի որ դուք ինքներդ ձեռք չեք վատնում անօգուտ և անիմաստ մարտերի մեջ: Պատերազմը միշտ լի է անակնկալներով, չնախատեսված իրադարձություններով, որոնք կարող են դանդաղեցնել և ոչնչացնել ցանկացած, առավել մտածված պլան:

Կառլ ֆոն Կլաուզիցը սա անվանում էր «շփում»: Պատերազմը Մերֆիի օրենքի հիանալի նկարագրում է, եթե ինչ-որ բան կարող է սխալ ընթանալ, ապա այն անպայման կընթանա: Բայց երբ նահանջում ես, ստիպում ես Մերֆիի օրենքը աշխատել քեզ համար: Նա Մերֆիի օրենքի զոհը դարձրեց ոչ թե իրեն, այլ Սմեթսին՝ նրան բավականաչափ ժամանակ տրամադրելով, որպեսզի տեղի ունենա ամենավատ բանը, որ կարող էր պատահել:

Յոթնամյա պատերազմի ժամանակ (1756-1763) Պրուսիայի թագավոր Ֆրիդրիխ Մեծը ստիպված էր դիմակայել ավստրիական, ֆրանսիական և ռուսական բանակներին, որոնք նրան ճնշում էին բոլոր կողմերից՝ պատրաստ լինելով մասնատել Պրուսիան և բաժանել այն միմյանց միջև: Սովորաբար Ֆրիդրիխը, որպես ստրատեգ, նախընտրում էր պատերազմը վարելու ագրեսիվ, հարձակողական ոճով, բայց այս անգամ ընտրեց պաշտպանությունն ու նահանջը, ինչը թույլ տվեց նրան ժամանակ շահել և դուրս պրծնել օղակից, որը թշնամիները արդեն ձգում էին այն նրա պարանոցին: Տարեցտարի նրան հաջողվում էր խուսափել աղետից, թեև տատանվում էր եզրին:

Եվ հանկարծ՝ անսպասելի իրադարձություն՝ ռուսական կայսրուհի Եղիսաբեթը՝ հանկարծամահ է լինում: Եղիսաբեթն ինքը ատում էր Ֆրիդրիխին, բայց Պետրոս III-ը՝ նրա եղբորորդին և գահաժառանգը, քմահաճ երիտասարդ էր, չէր սիրում մորաքրոջը, և անկեղծորեն հիանում էր Ֆրիդրիխ Մեծով: Նա ոչ միայն Ռուսաստանը դուրս բերեց պատերազմից, այլև բարեկամական դաշինք կնքեց պրուսացիների հետ: Յոթնամյա պատերազմն ավարտվեց: Հրաշքը, որին այդքան ժամանակ սպասում էր Ֆրիդրիխը, իրականացավ: Եթե նա հանձնվեր, երբ դժվար ժամանակներ էին, կամ փորձեր անցնել հարձակման, նա կգրկվեր ամեն ինչից: Փոխարենը նա դժվար կացությունից էլք գտնելու համար խորամանկություն էր բանեցնում և ժամանակ էր շահում, որպեսզի Մերֆիի օրենքը աշխատի ոչ թե իր, այլ թշնամիների դեմ:

Պատերազմը իրական իրադարձություն է, որը տեղի է ունենում որոշակի տարածությունում, և իրենց ռազմավարական ծրագրերը կոնկրետ վայրերում իրականացնելու համար հրամանատարներներից պահանջվում է քարտեզներ և պլաններ: Սակայն ռազմավարական մտքի ժամանակը ոչ պակաս կարևոր է, քան տեղը: Հմտորեն օգտագործելով ժամանակը, հնարավոր է դառնալ բարձրագույն ստրատեգ, որը կարող է լրացուցիչ խորություն հաղորդել ինչպես հարձակումներին, այնպես էլ պաշտպանությանը: Դրան հասնելու համար դուք պետք է դադարեք մտածել ժամանակի մասին որպես վերացական հասկացության: Իրականում, սկսած այն պահից, երբ դուք ծնվել եք, ժամանակն այն ամենն է, ինչ ունեք: Մարդիկ կարող են խլել ձեր իրերը, զրկել ձեզ ունեցվածքից: Բացի սպանությունից, ոչ ոք, նույնիսկ ամենահզոր զավթիչը, ի վիճակի չէ զրկել ձեզ ժամանակից, եթե դուք ինքներդ չեք տալիս այն ինչ-որ մեկին: Նույնիսկ բանտում ձեր ժամանակը ձերն է, եթե այն օգտագործում եք ձեր նպատակների համար: Ձեզ պարտադրված մարտերի և ճակատամարտերի վրա ժամանակ ծախսելը պարզապես սխալ չէ, դա ավելի բարձր կարգի հիմարություն է: Կորցրած ժամանակը հնարավոր չէ վերադարձնել:

ՀԵՂԻՆԱԿԱՎՈՐ ԿԱՐԾԻՔ

Հաղթում են այն ժամանակ, երբ ինքներդ զգույշ եք և սպասում եք հակառակորդի անզգուշությանը :

Սուն Յզի (մ.թ.ա. IV դար)

ՀԱԿԱՌԱԿ ԿՈՂՄԸ

Երբ հակառակորդը հարձակվում է ձեզ վրա, և ուժերի գերակշռությունը նրա կողմն է, ապա երբեմն, նահանջելու փոխարեն, կարող եք մարտի բռնվել: Սրանով դուք ռիսկի եք դիմում տառապանքներ կրել, նույնիսկ հաստատ դա տեղի կունենա, բայց նահատակությունն իր հերթին կարող է նաև ռազմավարություն հանդիսանալ: Նահատակության պսակը ձեզ կվերածի խորհրդանիշի, որը կոգեշնչի ապագա սերունդներին: Եթե ձեր պարտությունն ունի խորհրդանշական իմաստ, ապա իրավիճակը կարող է նպաստել ձեր գործի մեծարմանը և ընդգծել դրա ճշմարտացիությունը, ինչպես նաև ձեր հակառակորդների անճոռնիությունը: Բայց այս դեպքում ձեր զոհաբերությունը պետք է լինի բացառիկ, առանձնանա հսկայական թվով զոհերից և նահատակներից, որպեսզի չխառնվի նրանց հետ և չլուծվի, հակառակ դեպքում ամեն ինչ կփլուզվի: Նահատակությունը շատ վտանգավոր զենք է, դրա օգտագործումը կարող է հանգեցնել հակառակ արդյունքների, քանի որ դուք ռիսկի եք դիմում դուրս գալ և կորցնել իրադարձություններին հետևելու հնարավորությունից, և ազդեցությունը կարող է այնքան ուժեղ լինել, որ կարող է դուրս գալ վերահսկողությունից: Իսկ դա կարող է դարեր տևել, որպեսզի ամեն ինչ աշխատի: Նույնիսկ եթե խորհրդանշականորեն այս ճանապարհը կարելի է ճիշտ համարել, այնուամենայնիվ, լավ ռազմավարները փորձում են խուսափել դրանից: Նահանջը, այդուհանդերձ, ավելի ճիշտ ռազմավարություն է:

Սկիզբը.

- 1) https://www.datocms-assets.com/63284/1732378406-first-strategy_arm.pdf
- 2) https://www.datocms-assets.com/63284/1735414231-last-wars_arm.pdf
- 3) https://www.datocms-assets.com/63284/1740855330-keep-ur-head_arm.pdf
- 4) https://www.datocms-assets.com/63284/1744480072-drive-into-desperate_arm.pdf
- 5) https://www.datocms-assets.com/63284/1747510579-avoid-traps_arm.pdf
- 6) https://www.datocms-assets.com/63284/1751140077-divide-forces_arm.pdf
- 7) https://www.datocms-assets.com/63284/1754762031-crusade-war_arm.pdf
- 8) https://www.datocms-assets.com/63284/1759605001-force-estimate_arm.pdf
- 9) https://www.datocms-assets.com/63284/1766256811-stance_arm.pdf

Աղբյուրը. <https://www.litres.ru/book/robert-grin/33-strategii-voyny-624835/chi>